# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0714-Ա

## ՄՀԵՐ ԱԼԵՔՍԱՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ 1993թ-ին ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և հաշվի առնելով Մհեր Ալեքսանի Քոչարյանի (ծնված՝ 11.04.1954թ.) դիմումը, չափագրման համաձայնությունը և 2024HVS9QD (26.02.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել ՀՀ Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-070-0054-0015 ծածկագրից 0,001847հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա կառուցված տնտեսական շինության չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Ճանաչել ՀՀ Փամբակ համայնքի սեփականության իրավունքը՝ գյուղ Մարգահովիտ, 3-րդ փողոց, 10/1 տնտեսական շինություն հասցեում գտնվող, 06-070-

0054-0015 ծածկագրից 0,001847հա բնակավայրերի նպատակային նշանակության,
բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմից, հողամասի
վրա՝ 1993թ-ին ինքնակամ կառուցված, ընդհանուր 14,70քմ մակերեսով տնտեսական
շինության նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3.Օրինականացնել ՀՀ Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ
անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց
քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և
հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ
հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Միեր Ալեքսանի Քոչարյանի
կողմից 06-070-0054-0015 ծածկագրից 0,001847հա բնակավայրերի հողերի
նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության
հողամասի վրա՝ 1993թ-ին կառուցված ընդհանուր 14,70քմ մակերեսով տնտեսական
շինությունը:

4. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

19 հունիսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0715-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-023-0008-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 2-րդ փողոց, 17 անասնաշենք փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունիսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0716-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-023-0240-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 15-րդ փողոց, 7-րդ փակուղի, 14 անասնաշենք փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունիսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0717-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի գլխավոր հատակագիծը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ. N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Դավիթ Էդիկի Հունանյանի (ծնված՝ 16.12.1980թ.) դիմումը, «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2026X5S2ZHմուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1. Դավիթ Էդիկի Հունանյանի սեփականություն հանդիսացող 06-023-0240-0010 կադաստրային ծածկագրով 0,12264հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Դավիթ Էդիկի Հունանյանին պարտավորեցնել համայնքի բյուջե (հողի օտարումից եկամուտներ հաշվեհամար՝ 900235422137) վճարել 493075 (չորս հարյուր իննսուներեք հազար յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

3. Հաստատել 06-023-0240-0010 կադաստրային ծածկագրով 0,12264հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապտման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների հատակագիծը:

4. Օրինականացնել ՀՀ Փամբակ համայնք, գյուղ Բազում, 15-րդ փողոց, 7-րդ փակուղի, 14 անասնաշենք հասցեում գտնվող Դավիթ Էդիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,12264հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող 2019թվականին կառուցված ընդհանուր 158,6քմ արտաքին չափերով անասնաշենքը:

5. Պարտավորեցնել Դավիթ Էդիկի Հունանյանին (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2019 թվականին կառուցված ընդհանուր 158,6քմ արտաքին չափերով անասնաշենքի օրինականացման վճարը՝ 138617 (հարյուր երեսունութ հազար վեց հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

19 հունիսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0718-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-108-0002-0027 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Քարաբերդ, 3-րդ փողոց, 17 կիսակառույց փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունիսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0719-Ա

## ԼԵՎՈՆ ԱՇՈՏԻ ԱԼՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ. N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Լևոն Աշոտի Ալոյանի (ծնված՝ 19.01.1982թ.) դիմումը, հիմք ընդունելով «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման համաձայնությունը և 2026BLWDQ9 մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղ Քարաբերդ, 3-րդ փողոց, 17 կիսակառույց 06-108-0002-0027 կադաստրային ծածկագրով 0,0444հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա կառուցված 10,6քմ ընդհանուր մակերեսով անավարտ բնակելի տան չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականության իրավունքը՝ Փամբակ համայնք, գյուղ Քարաբերդ, 3-րդ փողոց, 17 կիսակառույց հասցեում՝ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 06-108-0002-0027 կադաստրային ծածկագրով 0,0444հա բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և Լևոն Աշոտի Ալոյանի կողմից հողամասի վրա 2002թ-ին ինքնակամ կառուցված 10,6քմ ընդհանուր

Ալոյանի կողմից հողամասի վրա 2002թ-ին ինքնակամ կառուցված 10,6քմ ընդհանուր մակերեսով անավարտ բնակելի տան նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3.Օրինականացնել ՀՀ Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված հողամասի վրա՝ Լևոն Աշոտի Ալոյանի կողմից, 2002թ-ին ինքնակամ կառուցված ընդհանուր 10,6քմ մակերեսով անավարտ բնակելի տունը:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

19 հունիսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0720-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0016-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 2-րդ փողոց, 33 բնակելի տուն փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունիսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0721-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ, ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Միեր Հենրիկի Հովսեփյանի (ծնված՝ 01.01.1974թ.), «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Դեբեդ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1991թ. N-1 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, այն հանգամանքը, որ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 2-րդ փողոց 33 բնակելի տուն հասցեում գտնվող 06-034-0016-0002 կադաստրային ծածկագրով 0,27385հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Միեր Հենրիկի Հովսեփյանի (ծնված՝ 01.01.1974թ.) սեփականության իրավունքը 06-034-0016-0002 կադաստրային ծածկագրով 0,27385հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող 63,48քմ ընդհանուր մակերեսով՝ մինչև 2001թ-ը կառուցված բնակելի տան նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունիսի 2026, գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0722-Ա

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԱՐԳԱՀՈՎԻՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սամվել Սուրենի Անանյանի և Սասուն Սեյրանի Անանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07042026-06-0016 և 07042026-06-0024 վկայականները, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, գրանցամատյան՝ 1745, 1746, 18.04.2004 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 9238 պայմանագիրը, Փամբակ համայնք ավագանու 14 մայիսի 2026թ-ի N 075-Ա որոշումը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնք, Մարգահովիտ գյուղում գտնվող 06-070-0284-0861 կադաստրային ծածկագրով 2,29064հա և 06-070-0284-0862 կադաստրային ծածկագրով 2,29065հա (համաձայն վարձակալության պայմանագրի 4,6հա) մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ Սամվել Սուրենի Անանյանի և Սեյրան Սուրենի Անանյանի վարձակալության իրավունքի ժամկետը երկարաձգել մինչև 18.04.2051 թվականը՝ Սամվել Սուրենի Անանյանի և Սեյրան Սուրենի Անանյանի ժառանգ Սասուն Սեյրանի Անանյանի անվամբ:

2.Սամվել Սուրենի Անանյանի և Սասուն Սեյրանի Անանյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնել Սամվել Սուրենի Անանյանի և Սասուն Սեյրանի Անանյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունիսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0723-Ա

## ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ. N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ կետով, հիմք ընդունելով Ռոբերտ Շավարշի Թամարյանի (ծնված՝05.05.1974թ.) դիմումը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Լեռնապատ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.03.1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որ հողամասը սեփականության սուբյեկտի սխալի հետևանքով փոխանցվել է համայնքային և կադաստրային քարտեզում արտացոլված է որպես համայնքային բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսք, սակայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ քաղաքացուն հատկացվել է որպես բնակելի կառուցապատման հողամաս, հողային ֆոնդի սկզբնական և ընթացիկ հաշվառման փաստաթղթերում այն հաշվառված է որպես բնակելի կառուցապատման սեփականություն, հատկացման օրվանից այն տնօրինում, տիրապետում, վճարում է հարկերը հատկացման հողամասին համապատասխան և այն փաստացի չի գտնվում համայնքի հողային հաշվեկշռում, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝ ***որոշում եմ***

1.Սխալի ուղղման հիմքով հաստատել Փամբակ համայնք, գյուղ Լեռնապատում գտնվող 06-041-0139-0012,0014,0015 կադաստրային ծածկագրով 0,36534հա հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծերի, փոխել իրավունքի սուբյեկտը և գործառնական նշանակությունը՝ որպես քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռոբերտ Շավարշի Թամարյանի (ծնված՝05.05.1974թ.) սեփականության իրավունքը 06-041-0139-0012,0014, 0015 կադաստրային ծածկագրով 0,36534հա (ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում

կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված՝ չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի կամ սեփականաշնորհված ***ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի օգտագործման դեպքում*** նշված հողատարածության նկատմամբ ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը): Բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված 154,87քմ ընդհանուր մակերեսով շինությունների նկատմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 20 ապրիլի 2026 թվականի N 0411-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

22 հունիսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0724-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0040-0002 կադաստրային ծածկագրից 0,04հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունիսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0725-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-107-0041-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, 1-ին փողոց, 4/2 հողամաս փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

23 հունիսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0726-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՅՈՒԴՄԻԼԱ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի ա ենթակետով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լյուդմիլա Ռուբենի Վարոսյանի 2026 թվականի հունիսի 23-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Լյուդմիլա Ռուբենի Վարոսյանի /ՀՎՀՀ 66872074/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 1 փ., տուն 4 հասցեում (25քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2026թ-30.06.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

23 հունիսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 0727-Ա

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026Թ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, առաջնորդվելով Փամբակ համայնքի ավագանու 18.06.2026 թվականի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 085-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***

Հաստատել Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

23 հունիսի 2026
գ. Փամբակ

Հավել

Փամբակ համայնքի ղեկավարի << 18 >> հունիսի 2026.- թիվ 0727 -Ա որոշման
Փամբակ համայնքի 2026թ. Բյուջեի եկամտային մասի բաշխումը ըստ եռամսյակների

հազար դրամ

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը այդ թվում | | | | վարչական մաս այդ թվում | | | | ֆոնդային մաս այդ թվու | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյա | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռամսյակ | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռամսյակ | կիսամյակ | 9 ամիս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 224360,7 | 526016,4 | 791168,0 | 972764,1 | 224360,7 | 478871,5 | 693427,4 | 872839,5 | 11220,3 | 103203,2 | 187498,9 |
| 1100 | այդ թվում 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 | 7100 | 42166,5 | 105175,3 | 127287,9 | 131527,4 | 42166,5 | 105175,3 | 127287,9 | 131527,4 | X | X | X |
| 1110 | այդ թվում` 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող | 7131 | 16367,0 | 42656,3 | 46738,9 | 49018,0 | 16367,0 | 42656,3 | 46738,9 | 49018,0 | X | X | X |
| 1111 | այդ թվում` Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 0,0 | 0,0 | 70,0 | 70,0 | 0,0 | 0,0 | 70,0 | 70,0 | X | X | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 0,0 | 0,0 | 500,0 | 1000,0 | 0,0 | 0,0 | 500,0 | 1000,0 | X | X | X |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 16367,0 | 42656,3 | 46168,9 | 47948,0 | 16367,0 | 42656,3 | 46168,9 | 47948,0 | X | X | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 23049,5 | 58539,0 | 73399,0 | 74339,9 | 23049,5 | 58539,0 | 73399,0 | 74339,9 | X | X | X |
| 1121 | այդ թվում` Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 23049,5 | 58539,0 | 73399,0 | 74339,9 | 23049,5 | 58539,0 | 73399,0 | 74339,9 | X | X | X |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող | 7145 | 2750,0 | 3980,0 | 7150,0 | 8169,5 | 2750,0 | 3980,0 | 7150,0 | 8169,5 | X | X | X |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության | | 500,0 | 1000,0 | 3000,0 | 3000,0 | 500,0 | 1000,0 | 3000,0 | 3000,0 | X | X | X |
| 11302 | Համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքի | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11303 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11304 | Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված [illegible] գազերի վաճառքի | | 1400,0 | 1400,0 | 1400,0 | 1400,0 | 1400,0 | 1400,0 | 1400,0 | 1400,0 | X | X | X |
| 11305 | Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում [illegible] | | 0,0 | 0,0 | 30,0 | 30,0 | 0,0 | 0,0 | 30,0 | 30,0 | X | X | X |
| 11306 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք [illegible] | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11307 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի [illegible] | | 400,0 | 800,0 | 1600,0 | 2345,5 | 400,0 | 800,0 | 1600,0 | 2345,5 | X | X | X |
| 11308 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11309 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 30,0 | 60,0 | 200,0 | 225,0 | 30,0 | 60,0 | 200,0 | 225,0 | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11310 | Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման | | 200,0 | 400,0 | 600,0 | 749,0 | 200,0 | 400,0 | 600,0 | 749,0 | X | X | X |
| 11311 | Բնակավայրի բնակավայրերում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11312 | Ավտոմեքենաների սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան` համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11313 | Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, | | 200,0 | 300,0 | 300,0 | 400,0 | 200,0 | 300,0 | 300,0 | 400,0 | X | X | X |
| 11314 | Համայնքի վարչական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11315 | Համայնքի վարչական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11316 | Համայնքի վարչական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 11317 | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 11318 | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության | | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | X | X | X |
| 11319 | Այլ տեղական տուրքեր | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1140 | 1.4 Համայնքի բյուջե վճարվող | 7146 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 1141 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1142 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1150 | 1.5 Այլ հարկային եկամուտներ | 7161 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1151 | Օրենքով սահ. բյուջե | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1152 | Ընդհանուր հաշվի | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1153 | Շահութահարկ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1154 | Այլ հարկերից և պարտադիր | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1155 | Հողի հարկի, գույքահարկի և | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + | 7300 | 171436,0 | 390224,3 | 562256,0 | 735875,3 | 171436,0 | 343079,4 | 514515,4 | 685950,7 | 0.0 | 47144,9 | 47740,6 |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական | 7311 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 1211 | Հաշվետու ժամանակաշրջանում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին՝ | 7312 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1221 | Հաշվետու ժամանակաշրջանում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին՝ | 7321 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 1231 | Հաշվետու ժամանակաշրջանում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին՝ | 7322 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1241 | Հաշվետու ժամանակաշրջանում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական | 7331 | 171436,0 | 343079,4 | 514515,4 | 685950,7 | 171436,0 | 343079,4 | 514515,4 | 685950,7 | X | X | X |
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 171436,0 | 342871,3 | 514307,3 | 685742,6 | 171436,0 | 342871,3 | 514307,3 | 685742,6 | X | X | X |
| 1252 | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝ | | 0,000 | 208,082 | 208,082 | 208,082 | 0,000 | 208,082 | 208,082 | 208,082 | X | X | X |
| 1253 | Համայնքի բյուջեի | | 0,000 | 0,000 | 0,000 | 0,000 | | | | 0,000 | X | X | X |
| 1254 | Այլ դոտացիաներ | | 0,000 | 208,082 | 208,082 | 208,082 | 0,000 | 208,082 | 208,082 | 208,082 | X | X | X |
| 1255 | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | | | | 0,0 | X | X | X |
| 1256 | 22 այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | | | | 0,0 | X | X | X |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + | 7332 | 0,0 | 47144,9 | 47740,6 | 49924,6 | X | X | X | X | 0.0 | 47144,9 | 47740,6 |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 0,0 | 47144.9 | 47740,6 | 49924,6 | X | X | X | X | 0.0 | 47144,9 | 47740,6 |
| 1262 | 22 այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող | 7400 | 10758,2 | 30616,8 | 101624,1 | 105361,4 | 10758,2 | 30616,8 | 51624,1 | 55361,4 | 11220,3 | 56058,3 | 139758,3 |
| 1310 | 3.1 Տոկոսներ այդ թվում՝ | 7411 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1311 | Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ | 7412 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 1321 | Բաժնետիրական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | | | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող | 7415 | 3300,0 | 5500,0 | 11310,0 | 12269,3 | 3300,0 | 5500,0 | 11310,0 | 12269,3 | X | X | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության | | 3000,0 | 5000,0 | 10500,0 | 11459,3 | 3000,0 | 5000,0 | 10500,0 | 11459,3 | X | X | X |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1333 | Համայնքի վարչական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 300,0 | 500,0 | 810,0 | 810,0 | 300,0 | 500,0 | 810,0 | 810,0 | X | X | X |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի | 7421 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 1341 | Համայնքի սեփականություն | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1342 | Պետության կողմից տեղական | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1343 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող | 7422 | 7108,2 | 13770,7 | 27518,0 | 30296,0 | 7108,2 | 13770,7 | 27518,0 | 30296,0 | X | X | X |
| 1351 | Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+ | | 6488,8 | 11852,7 | 23700,0 | 26296,0 | 6488,8 | 11852,7 | 23700,0 | 26296,0 | X | X | X |
| 13501 | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման | | 50,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 50,0 | 100,0 | 100,0 | 100,0 | X | X | X |
| 13502 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվության պահանջող | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13503 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության | | 200,0 | 400,0 | 700,0 | 1000,0 | 200,0 | 400,0 | 700,0 | 1000,0 | X | X | X |
| 13504 | Համայնքի տնօրինության և oգտագործման տակ գտնվող | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13505 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության | | 100,0 | 200,0 | 400,0 | 600,0 | 100,0 | 200,0 | 400,0 | 600,0 | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13506 | Համայնքի վարչական տարածքում տոնակատարություն | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13507 | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | 1800,0 | 4600,0 | 8000,0 | 8000,0 | 1800,0 | 4600,0 | 8000,0 | 8000,0 | X | X | X |
| 13508 | Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13509 | Կենտրոնացված ջեռուցման համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13510 | Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում | | 0,0 | 200,0 | 1000,0 | 1500,0 | 0,0 | 200,0 | 1000,0 | 1500,0 | X | X | X |
| 13511 | Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13512 | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
| 13513 | Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար | | 1000,0 | 1500,0 | 3500,0 | 4500,0 | 1000,0 | 1500,0 | 3500,0 | 4500,0 | X | X | X |
| 13514 | Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար | | 246,1 | 600,0 | 1700,0 | 2196,0 | 246,1 | 600,0 | 1700,0 | 2196,0 | X | X | X |
| 13515 | Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X |
| 13516 | Համայնքային սեփականություն հանդիսացող աստամուտային և | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13517 | Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | 0,0 | X | X | X |
